

Հայոց նախագահի տեսական մասնակից պատճեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Ս- ՑԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ՌԱԴԻ

ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի առաջարկած Առաքելական Ս- Ցակոբ Եկեղեցւոյ Տարեկան անդամական ժողովը  
տեղի ունեցաւ, Յունվար 15, 1957, Երեքշաբթի, Երեկոյեան ժամը 9-20-ին,  
Եկեղեցւոյ սրահին մէջ:

Որքան ալ որ ժողովը տեղի պիտի ըւնենար 7-45-ին, սակայն սաստիկ ձիւնի  
եւ ցուրտի պատճառաւ, անդամները հազիւ կրցան ի մի հաւաքւիլ:

Ժողովը բացւեցաւ Ամերիկայի Թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տէր Մամբրէ Ս- Արքեպիս-  
կոպոս Գալֆաեանի աղօթքով եւ որհնութեամբ:

Եկեղեցւոյ տրատու անդամներու անւանացանկը կարդացւեցաւ եւ Ներկաները կարգա-  
դէպի սեղան առաջանալով\* իրենց ստորագրութիւններով հաստատեցին իրենց Ներկա-  
յութիւնը: Ներկա էին 84 անդամներ\* որոնք իրենց անդամատուրքերը լրիւ վը-  
ճարած էին եւ Եկեղեցւոյ Ծրագիր կանոնագրի համաձայն քէարկութեանց մասնակ-  
ցելու իրաւունք ունէին:

Անդամական ժողովի Օրակարգի հարցերը հետեւեալներն էին-

- 1- Ընտրութիւն ժողովի Ատենապետի եւ Ատենադպիրի
- 2- Հաւանութիւն անդամատուրքի խոստմնագրի սիսթեմի
- 3- Տեղեկատութիւն Ծխական Խորհուրդի
- 4- Տեղեկատութիւն գանձապահի
- 5- Տեղեկատութիւն Տիկնանց Միութեան
- 6- Տեղեկատութիւն Դպրաց Դասի
- 7- Տեղեկատութիւն Հաշւէքննիչ Ցանձնախումբի
- 8- Ընտրութիւն Ծխական Խորհուրդի 3 անդամներու
- 9- Ընտրութիւն 2 թեմական Ներկայացուցիչներու երեսվոխան- եւ  
իրենց անձնափոխանուղներու:
- 10- Ընտրութիւն Հաշւէքննիչ Ցանձնախումբի 3 անդամներու

Ներկայացւած այս օրակարգին վրա ճաւելցան հետեւեալ հարցերը-

- 1- Նախորդ ժողովի արձանագրութեան ընթերցում եւ կաւերացում
- 2- Տիկնաց Միութեան գանձապահի զեկոյց

1- Հոգաբարձութեան ատենապետ Տքթ- Ճորճ Վրանեան ժողովին Ներկայացուց օրւա  
ատենապետի եւ ատենապպիրի ընտրութեան հարցը եւ յայտարարեց թէ ինք պատրաստ  
է անոնց ընտրութեան համար Թեկնածուներու անուններ ընդունելու:  
Ատենապետի համար առաջարկւեցան եւ Երկրորդւեցան հետեւեալ անունները-  
1- Պր- Արամ Կարապետեան  
2- Պր- Աւետիս Տէտէեան  
3- Պր- Վահան Ղազարեան

Պր- Վահան Ղազարեան չնդունեց ատենապետութեան Թեկնածութիւնը, որով մնացին  
առաջին երկուքը:

Ատենապպիրի համար առաջարկւեցան եւ Երկրորդւեցան հետեւեալները-

- 1- Տիկ- Վրճինիա Կրին
- 2- Պր- Վահան Ղազարեան

Քւէարկութեան մասնակցողներու անունները մի առ մի կարդացւեցան եւ իրենց  
գաղտնի քէները տուփը ձգեցին: Քւէարկողներու ընդհանուր թիւն էր 83:

Երբ մէկ կողմէն հաշւէքննիչ Ցանձնախումբը քէները կը համբէր, Սրբազան հայրը  
ժամանակ շաբելու համար Եկեղեցական կարգ մը հարցերու շուրջ բացատրութիւներ  
տւառ: Դուք մինչեւ հիմա, ըստ Սրբազան Հայրե, անկայուն դրութեան մը մէջ  
գտնւելով ըրիք շատ մը սխալներ, սակայն այսօր դուք այլեւս տուն ունիք եւ  
մարմին էք, այնպէս որ պէտք է դուք Զեր աշխատանքները առաջ տանիք մեր Եկեղեցւոյ

Սահմանադրութեան եւ օրէնքներուն համաձայն՝"

Ք է արկութեանց արդիւնքը հետեւեալն էր՝ Ատենապետի համար ՊՐ- Արամ Կարապետեան շահած էր 44 քւէ, իսկ ՊՐ- Աւետիս Տէտէեան\* 38 քւէ։  
Ատենապիտի համար ՊՐ- Վահան Ղազարեան շահած էր 43 քւէ, իսկ Տիկ- Վըրճինիա Կրին\* 40 քւէ։

Օրւա ժողովի Ատենապետ ՊՐ- Արամ Կարապետեան եւ Ատենադպիր ՊՐ- Վահան Ղազարեան Հրաւիրւեցան որ ժողովի Օրակարգի հարցերուն ընթացք տան։

2- Ատենապետ ՊՐ- Ա- Կարապետեան Հրաւիրեց Հոգաբարձութեան Քարտուղար ՊՐ- Ճանի Պարոնեանը, որ նախորդ ժողովի արձանագրութիւնը կարդա։

Կարդացւեցաւ Փետրուար 21, 1956-ի անդամական ժողովի մանրամասն արձանագրութիւնը, որ տեղի ունեցած էր Ճան Մարշը պանդոկի Ռուա Կարտընին մէջ\* ի ներկայութեան Հոգեշնորհ Տէր Լեւոն Քահանա Առաքելեանի։

Ներկաները իրենց ծափահարութիւններով վաւերացուցին արձանագրութիւնը։

3- Հաւանութիւն Անդամատուրքի խոստմնագրի սիսթեմի։ Այս հարցի շուրջ Գերաշնորհ Տէր Մամբը Ս- Արքեպիսկոպոս Գալաթեան շատ պարզ եւ հասկնալի լեզով բացատրութիւններ տւաւ եւ յայտնեց Թէ գրեթէ բոլոր գաղութներու մէջ գտնւող Եկեղեցիները որդեգրած են Փլէճ-ի սիսթեմը, խոստումի սիսթեմը- եւ այդպէսով Թէ իրենց Եկեղեցիներու ընթացիկ ծախսերը եւ Թէ իրենց ունեցած պարտքերը գոցած են։ Սըրբազն Հայրը թելադրեց, որ նւազագոյն շաբաթը մէկ տոլարի օրէնքը որդեգրած եւ 52 զանազան պահարաններու մէջ զիտեղելով վերաբարձրին Եկեղեցւոյ Հոգաբարձութեան։ Սըրբազն Հայրը շատ որոշ գըրձուց, Թէ այս կերպով այլ եւս ոչ անդամատութը վճարելու հարկադրւած պիտի ըլլան անդամները եւ ոչ ալ Եկեղեցւոյ պնակներուն մէջ դրամ ձգելու, այլ այդ պնակներուն մէջ պիտի ձգեն իրենց պահարանները։ Սըրբազն Հայրը նոյնպէս բացատրեց, Թէ իւրաքանչիւր տան մէջ գտնւող գործող անդամներ պարտաւոր են այդ նւազագոյն վճարումը ընելու, նոյնպէս, եթէ կան անկարող անդամներ, որ անհանսապէս ի վիճակի չեն այդ նւազագոյն գումարը վճարելու, այն ատեն կը ձգեի իրենց կամքին։ Եթէ տան մէջ միայն ամուսինն է գործողը\*այլին ժամանակ մէկ տոլարը բաւարար պիտի համարել երկուքի համար։ Սըրբազն Հայրը թելադրեց, որ Հոգաբարձութիւնը այդ սիսթեմի գործադրութեան անցնի Փետրուար ամսւա սկիզբը\* երբ պահարանները պատրաստ են ժողովուրդին հասցնելու։ Տրւած բացատրութիւններէն վերջ ներկաները ծափահարութեամբ ընդունեցին խոստմնագրի այս նոր սիսթեմը։

4- Ծխական Խորհուրդի Տեղեկատութիւն։

Հոգաբարձութեան ատենադպիր ՊՐ- Ճանի պարոնեան իր ունեցած նոթագրութիւններէն\* բերանացի զեկոյց տւաւ Հոգաբարձութեան ընդհանուր աշխատանքներուն շուրջ-զեկոյցի գլխաւոր կիտերն էին։

- 1- Հոգաբարձութիւնը Եկեղեցւոյ շինուաթեան համար Առաջնորդարանէն 10,000 տոլարի փոխառութիւն ըրած է, որու 5,000 տոլարը արդէն իսկ վերաբարձուցած է։
- 2- Գերաշնորհ Տէր Մամբը Սոււրը Արքեպիսկոպոս Գալաթեանի Ներկայութեան, Ցունվար 29, 1956, Եկեղեցւոյ շինուաթեան համար բացւած հանգանակութեան խոստումներու ընդհանուր գումարը եղած է 12,000 տոլար։
- 3- Ռիշմինտի Հայոց հին գերեզմանատան տեւական Հոգատարութեան համար մասնաւոր Ցանծնախումբի մը միջոցաւ հաւաքւած է 395 տոլար։
- 4- Անդամատուրքներէ գանձւած է 840 տոլար։
- 5- Սարքւած են զանազան ձեռնարկներ՝\* հետեւեալ կարգով-  
Ա- Ցունվար 29-ին  
Բ- Զատիկին  
Գ- Եկեղեցւոյ անկիւնաքարի զիտեղման առթիւ, Ցուլիս 14, 1956-ին  
Դ- Եկեղեցւոյ Օժման ձաշկերոյթ, Սեպտեմբեր 9- 1956-ին  
Ե- Սոււրը Ցանի ձաշկերոյթ, Դեկտեմբեր 30, 1956-ին  
Այս բոլոր ձեռնարկներէն զուտ Եկամուտը եղած է 2013-60 տոլար։

6- ՄԵՂՄՀ անդաբ & մեկնողներ եղած են՝

Ա- Տիկ- Թիւրվանտէ Բարսեղեան

Բ- Պը- Ցակոք ՊէքԹիմիրեան

Գ- Տիկ- Մենեվեր հւզպաշեան

Դ- Պը- Տիգրան Փափազեան

Ե- Պը- Սիմոն Էօքսիւզեան

Այս մահերու առթիւ, փոխան ծաղկեպսակի ի նպաստ եկեղեցւոյ եղած հանգանակու-  
թիւններէն գոյացած է 1,098-25 տոլար:

7- Ունեցած են մէկ ընդհ- Անդամական ժողով-նախապատրաստական- եւ 59 վարչական  
ժողովներ:

Հոգաբարձութեան տարեկան գործունէութեան այս գեկոյցը ներկաներու ծափահարու-  
թեան արժանացաւ:

5- Տեղեկատութիւն Հոգաբարձութեան գանձապահի:

Նկատի ունենալով որ գանձապահի միմիոկրաֆով տասնեակներով օրինակ պատրաստած  
էր իր գեկոյցը եւ նկատի ունենալով որ ամէն մէկ անդամ արդէն իսկ անոնցմէ մէ-  
կական օրինակներ ստացած էին, Սրբազն Հայրը զանց առաւ գեկոյցի մանրամասն  
ընթերցումը եւ հրաւիրեց հաշւէքնից Շանձնախումբի անդամները, որ անոնք իրենց  
գեկոյցը տան այդ հարցի շուրջ:

Թանձնախումբի անդամներ Պը- Աւետիս Տէտէան, Պը- Համբարձում Հայ վաճեան եւ  
Կը- Հինրի Մակարեան միասնաբար յայտնեցին թէ իրենք գանձապահի հաշիւները  
իսկ ստ մանրամասնութեամբ քննած են եւ գտած են որ թէ հաշիւները իրենց մանրա-  
մասնութիւններով ճիշդ են թէ եւ թէ անոնք պահւած են շատ ինամբով։ Անոնց  
տւած այս բացատրութիւններէն վերջ, ներկաները գանձապահի կատարած այդ պա-  
տաշխանատու աշխատանքին ի գնահատութիւն ծափահարեցին:

Հաշւէքիցիոր ընհինանուր Մուտք ցոյց տւած էր 65,478-41 տոլար, իսկ ընդհանուր  
ելք\* 64,600-48 տոլար, որով պանքան կը մնար 877-93 տոլար։

6- Տեղեկատութիւն Տիկնանց Միութեան:

Եկեղեցասէր Տիկնաց Միութեան քարտուղար Տիկ- Նեկտար Մանուէլեան իրենց  
գործունէութեան երկամեա գրաւոր գեկոյցը կարդաց։ Այս իսեստ ինամբով եւ իսեստ  
կարեւոր մանրամասնութիւններով պատրաստած գեկոյցը կը պարունակէր Միութեան  
գործունէութեան լրիւ պատկերը, անոնցմէ մէկ քանին հետեւալներն էին-

Ա- Կը յայտնէին հաւատարիմ մնալ հայ ժողովուրդի պատմական եկեղեցւոյ։ Հայաս-  
տանեայց Առաքելական եկեղեցւոյ, անոր արժանաւոր Վեհափառին\* Տէր-Տէր  
Վազգէն Ա- Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Ամերիկայի Թեմի Առաջնորդ\* Գերա-  
շնորհ Տէր Մամբէր և Սուրբ Արքեպիսկոպոս Գալաքարանի:

Բ- Վարչութիւնը ունեցած է 13 կանոնաւոր ժողովներ եւ երկու խառն ժողովներ\*  
տեղւոյս Հոգաբարձութեան հետ։

Գ- Ունեցած են 26 անդամական ժողովներ եւ տուներու մէջ ճաշկերոյթներ, որոնց-  
մէ գոյացած է 459 տոլար։

Դ- Վաճառած են հին հագուստներ, որոնցմէ գոյացած է 432-43 տոլարի կոկիկ  
գումար մը։

Ե- Տւած են 4 ճաշկերոյթներ նորակառոյց Եկեղեցւոյ սրահին մէջ, որմէ գոյացած  
է 359-90 տոլար։

Զ- Միութեան անդամակցութեան թիւը 25-էն բարձրացուցած են 51-ի; եւ անդամա-  
տուրք երը գանձած են 100 տոկոսով։

Է- Կազմած են հիւանդներու այցելող եւ Խորանին պահապահ զարդարման սպասարկող  
Շանձնախումբեր։

Տիկ- Նեկտար Տէրտէրեանի գեկոյցը ներկաներու բուռն ծափահարութեան արժանացաւ։

- 7- Տեղեկատութիւն Տիկնաց Միութեան Գանձապահի -  
 Տիկ- Վըրճինիա Տէտէեան Միութեան ընդհանուր Ելեւմուտը կարդաց ներկաներուն, գանձապահի զեկոյցը կը պարունակէր միայն 1956-ի մանրամասնութիւնները, որոնց ընդհանուր գումարն էր 1009-68 տոլար, իսկ 1955-էն փոխադրւած էր գանձը 1101-75 տոլար, ընդհանուր գումար՝ 2111-43 տոլար։ Միութեան ընդհանուր ելքը եղած էր 1673-41 տոլար եւ պանթը պատրաստ դրամ կար 438-02 տոլար։ Ցունվար 1, 1957-ին։  
 Գանձապահ Տիկ- Վըրճինիա Տէտէեանի զեկոյցը ծափահարութեամբ ընդունւեցաւ։
- 8- Տեղեկատութիւն Դպրաց Դասի- Դպրաց Դասի Կողմէ զեկոյց տւաւ Սր- Ռաբսի Գրիգորեան։ Զեկոյցին Համաձայն անոնք ունեցած էին 1065-10 տոլարի մուտք, 1956-ի շրջանին, իսկ տարւո սկիզբը անոնք ունէին 888-99, այդ ընդհանուր գումարէն։ 1954-ս տոլարէն ելք ունեցած էին 1915-65 տոլար, որու 1100-00 տոլարը վճարւած էր օրկընին Համար։  
 Օր- Ռաբսի Գրիգորեանի զեկոյցը եւ ներկաներու ծափահարութեան արժանացաւ։
- 9- Ընտրութիւններ Ծխական Խորհուրդի Յ անդամներու, Հաշւէքնիչ Ցանձնախումբի Յ անդամներու, Երեսփոխաններու և անոնց անձնափոխանորդներու։  
 Սրբազան Հայրը Նկատի ունենալով որ նախապէս միմիուրաֆով պատրաստւած Թեկնածուներու ցանկը կա մէկ Թուղթի վրա։ Ժողովականներուն յայտարարեց որ չորս քէչարկութիւնը մէկ անգամէն ըլլա, Թէ գործը դիւրացնելու եւ թէ ժամանակ ինացելու Համար։  
 Ներկաններուն յայտարարուեցաւ, որ Հոգաբարձութեան 6 Թեկնածուներէն միայն 3-ին քէչարկեն։ Երեսփոխաններու 4 Թեկնածուներէն քէչարկեն միայն երկուքին, Հաշւէքնիչ Ցանձնախումբի 6 Թեկնածուներէն քէչարկեն միայն երեքին եւ Երեսփոխաններու անձնափոխանորդի 4 Թեկնածուներէն միայն 2-ին քէչարկեն։ Սրբազան Հայրը Նոյնպէս յայտարարեց, որ բոլոր անոնք որ ուրիշ ընտրելիներ ունին սակայն անոնց անունները Թևկնածուներու ցանկին վրա չէ, ազատ են անոնց անունները աւուցնու իրանց քէչարկութիւնի վրա։
- Անդամնութ Այս անգամ եւս, Ներկաններու անունները մի առ մի կարդացւեցաւ եւ անոնք մի ինչ քէչարկութիւն մէջ ձեցին։  
 Հաշւէքնիչ Ցանձնախումբի սրբ անդամները, Տքթ- Ճորճ Վրանեան եւ Պր- Ճորճ Էօքսիւզեան սեննեակ քաշւելով՝ ձեռք ձգեցին քէչարկութեանց արդիւնքը, որը հետեւ սալ էր-  
 Ա- Պր- Գրիգոր Գրիգորեան շահած էր 56 քւէ եւ ընտրւած  
 Բ- Պր- Հէնրի Մակարեան շահած էր 56 քւէ եւ ընտրւած  
 Գ- Տաքթ- Ճորճ Վրանեան շահած էր 48 քւէ եւ կերնտրւած  
 Ժաջորդ առաւելագոյն քւէ շահողները եղած էին։ Պր- Նշան Քուստիկեան 33 քւէ, Կր- Ճան Կարունեան 30 քւէ, իսկ Պր- Ճորճ Վրանեան 23 քւէ։  
 Սրբազան Հայրը Նկատի ունենալով որ Պր- Գրիգոր Գրիգորեան եկեղեցւոյ Սարկաւագ է եւ այդ ուղղութեամբ ան շտմ մեծ օգտակարութիւն ցոյց տւած է, յարմար դատեց որ ան հրաժարի Հոգաբարձութեան անդամ ըլլակ եւ անոր տեղ Հոգաբարձու ըլլա Պր- Նշան Քուստիկեան։ Պրակէս յաջորդ առաւելագոյն քւէ շահողը Ընտրութենէն առաջ Պր- Ճան Կարունեան յայտարարեց որ իր անունը գույք թեկնածուներու ցանկին, սակայն Սրբազան Հայրը իր մասին գովասանքով խօսելէ վերջ յայտնեց Թէ այդպիսի փոփոխութիւն հակաօրինական է։ Սրբազան Հօր բացարութիւնէն կերջ, Պր- Ճան Վարոնեան յայտարարեց թէ ինք այդ պաշտօնը կնդունի։ Երբ ընտրւելու ըլլա։  
 Երեսփոխաններու ընտրութեան արդիւնքը Ընտրւեցան Հետեւեալները  
 Ա- Պր- Հէնրի Մակարեան շահած էր 52 քւէ եւ ընտրւած  
 Բ- Պր- Ճորճ Անսպիկեան շահած էր 50 քւէ եւ ընտրւած  
 յաջորդ առաւելագոյն քւէ շահողները եղած են, Տքթ- Ճայթք Կարունեան 16 քւէ, Տքթ- Ճորճ Վրանեան 15 քւէ, Պր- Հէնրի Տարխանան 13 քւէ, իսկ Պր- Ճէրի Շահկեան 11 քւէ։  
 Երեսփոխաններու անձնափոխանորդներու Պրակնութեան արդիւնքը Հետեւեալն էր-  
 Ա- Պր- Վահան Ղազարեան շահած էր 49 քւէ եւ ընտրւած  
 Բ- Պր- Ճէյք Կարունեան շահած էր 46 քւէ եւ ընտրւած

Ցաջորդ առաւելագոյն քւէ ստացողներն էին՝ Կր- նշան Քուստիկեան \* 30 քւէ, Ար- Տքթ- Ճորճ Վրանեան \* 29 քւէ, Պր- Հէրի Տարխանեան \* 10 քւէ:

Հաշւէքննից Ցանձնախումբի անդամներու ընտրութեան արդիւնքը հետեւեալն էր-

|    |     |                 |       |    |    |     |    |         |
|----|-----|-----------------|-------|----|----|-----|----|---------|
| Ա- | Գր- | Ռապորթ Մակարեան | շահած | էր | 60 | քւէ | եւ | ընտրւած |
| Բ- | Գր- | Ճան Գրիգորեան   | շահած | էր | 47 | քւէ | եւ | ընտրւած |
| Գ- | Պր- | Աւետիս Տէտէեան  | շահած | էր | 43 | քւէ |    |         |
| Դ- | Պր- | Վահան Ղազարեան  | շահած | էր | 43 | քւէ |    |         |

Վերջին Երկուքի հաւասար քւէ ստանալուն համար պէտք էր որ դարձեալ քէարկութիւն ԸԼԼաթ, սակայն Կր- Աւետիս Տէտէեան յայտարարեց թէ ինք երեք տարի է որ այդ պաշտօնը վարած է, ուստի ինք կը ձգէ որ Կր- Վահան Ղազարեան ըլլայ յանձնախումբի երրորդ անդամը:

Ծաջորդ առաւելագոյն քւէ շահողներն էին \* Կր- Արամ Կարապետեան \* 38 քւէ, Պր- Աբրահամ Շահինեան \* 17 քւէ:

Օրակարգի հարցերէն դուրս եղան կարգ մը կարեւոր յայտարարութիւններ, որոնք հետեւեալներն էին-

|    |   |
|----|---|
| Ա- | Աւանդապահ Ցանձնախումբի կողմէ Կր- Աւետիս Տէտէեան յայտարարեց թէ իրենք իրենց գանձին մէջ 10ս տոլար ունին: |
|    | Ներկաներու հաւանութեամբ որոշւեցաւ Աւանդապահ Ցանձնախումբը նոյնութեամբ պահուլ:                          |

Բ-

|  |
|--|
| Հաշւէկիւռի մէջ Երեւցած 700 տոլարի մասին, որու դէմ էսթէյթ գրւած էր, |
|--|

Կր- Փիթ Կրին բացատրեց թէ ատոր 500 տոլարը Տիգրան Փափազեանի կտակէն

մնացած է, իսկ 200 տոլարն ալ Վազրդան Մառուկեանի կտակէն:

Գ-

|  |
|--|
| Սրբազան Հայրը յայտարարեց թէ Տիկ- Ճուհար Կարոեան Եկեղեցւոյ Աղաւնիին համար 155 տոլար վճարած է: |
|--|

Դ-

|  |
|--|
| Նոյնպէս Գերաշնորհ Տէր Մամբը Առւը Արք Եպիսկոպոս Գալժաեան յայտարարեց թէ Ըիչմընտի հայ գաղութիւն Հիմնադիր Յարութիւն Աղա Տարխանեանի գաւակը Քալի- Ֆորնիայէն 10 տոլար ղրկած է, որ իր հօր համար հոգէհանգիստ կատարւի Եկեղեցւոյ մէջ: |
|--|

Ե-

|   |
|---|
| Սրբազան Հայրը յայտարարեց թէ Հոգաբարձութիւնը շատ լաւ գաղափար մը յղացած է եւ որոշած, որ տեղւոյս Սուրբ Պողոս Եպիսկոպոսականաց Եկեղեցւոյ 150 տոլարի նւէր մը տա: Ներկաները անսահման գոհունակութեամբ ծափահարեցին այդ որոշումը: |
|---|

Գերաշնորհ Տէր Մամբը Առւ- Արք Եպիսկոպոս  
Գալժաեանի կարգ մը Բացատրութիւններն ու Յայտարարութիւնները

Ա-

|  |
|--|
| Ամենայն Հայոց Կաթողիկոսի * Տէր-Տէր Վազգէն Ա- Կաթողիկոսի Օժման եւ Կինօξամերգ շարժանկարներու մասին յայտնեց թէ շատ լաւ են անոնք եւ պէտք է որ ցուցադրւին Եկեղեցւոյ սրահին մէջ * ի նպաստ Եկեղեցւոյ: |
|--|

Բ-

|   |
|---|
| Գովասանքը ըրաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի * Տէր-Տէր Վազգէն Առաջինի եւ յայտնեց թէ ան Վեհափառը սէր եւ միութիւն կը քարոզէ շարունակ- սէր * հանդէպ ազգին, Եկեղեցին եւ Հայրենիքին նկատմամբ: Կոչ ըրաւ Ներկաներուն, որ իրենց բերանները բանան սիրոյ եւ խաղաղութեան համար եւ ոչ թէ բամբասանքի եւ ըսի- ըսաւի համար: Սրբազանը նոյնպէս յայտնեց թէ Թշնամական խօսքերու եւ անհատներու ածականները կցողներու կարեւորութիւն պէտք չէ տալ: |
|---|

Գ-

|  |
|--|
| Խօսքնով Եկեղեցւոյ հովիւի մասին, ըսաւ թէ շատ մը Եկեղեցիներ Թափուր են եւ երբ մեզ Եկեղեցական կուտա ինք ուրախութեամբ պէտք է ընդունինք: Սրբազանը նոյնպէս յայտնեց թէ երբ 3 հովիւներ չկան թեկնածու ըլլալու համայնքը ընտրութիւն չկրնար ընել, այդ իսկ պատճառաւ, հովիւի ընտրութիւնը կը մնա Առաջնորդին: Այս առթիւ կարգ մը գովասանական խօսքեր ըսաւ Տէր Պողոսի մասին եւ նշեց անոր առաքինութիւններն ու բարեմասնութիւնները: |
|--|

Դ-

|   |
|---|
| Սրահի գործածութեան մասին տւաւ կարգ մը բացատրութիւններ եւ յայտնեց թէ ոչ մէկ պարագայի տակ որեւէ կարգի պէնտ չի կընար նւազել Եկեղեցւոյ սրահին մէջ: Սրբազանը յայտնեց թէ ինք արդէն այդ մասին կանուխին գրած էր Հոգաբարձութեան: |
|---|

- Ե- է Ց-Սի-Ռւայ-Օ-ի մասին խօսելով յայտնեց թէ անոնք մեր գոյավիճակի ժառանգորդ-ներն են եւ պէտք է որ ամէն կերպով ուժ տանք անզնց ընդգրկած աշխատանքներուն։  
Անդամակցութեան տարիքի չափը Յթ է, ըսաւ Սրբազն Հայրը։
- Զ- Կիրակնօրեա եւ Հայ Դաւրոցի մասին խօսելով, Սրբազնը յայտնեց թէ շատ ղժւարին գործ է, սակայն մենք մեր կարելին պէտք է որ ընենք եւ մեր յաջորդական սերունդ-ներու ձուլումը քիչ մը յետաձգենք։ Կոչ ըրաւ Տիկնաց Եկեղեցակարացին, որ այս ուղղութեամբ աշխատին եւ այդ դպրոցները հաստատեն։

Գերաշնորհ Սրբազն Հօր այս խրատականներէն, յորդորներէն եւ շինիչ թելադրութիւն-ներէն վերջ, անդամական ժողովը փակւեցաւ առաւտեան ժամը մէկի ատենները։

ՏԱՐԾԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԺԱՄԵԱ ԴԻՒԱՆ

ԱՏԵՆԱԿԵՏ\* ԱՐԱՄ ԿԱՐԱԿԵՏԵԱՆ

ԱՏԵՆԱԴԻՐ\* ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ

*Վահան Ղազարեան*

ՑՈՒԽՎԱՐ 15, 1957  
Ռիչմընտ, Վլոճինիա